«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
տնօրենների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)
ՈՐՈՇՈՒՄ թիվ 2

(Կազմված է «07» փետրվարի 2022 թ.-ին և բաղկացած է 2 (երկու) էջից)

Խորհրդի անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Խորհրդի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ ՝ 2022 թվականի փետրվարի 7
Խորհրդի սկիզբ՝ ժամը 09:30

Խորհրդի նիստին ներկա էին՝

1) Միխաիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ

2) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ

3) Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ

4) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

ՀՀ օրենսդրությամբ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝ քվորումն ապահովված էր, Խորհրդի նիստն իրավասու էր:

ՕՐԱԿԱՐԳ՝

1) «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերության հետ ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/5 /ինսունինը կոտորակ հինգ/ հասցեում գտնվող անշարժ գույքի /սեփականության վկայական թիվ 03122021-01-0130/ վարձակալության պայմանագրի կնքման հարցի քննարկում:
2) «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերության հետ ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/1 /ինսունինը կոտորակ մեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքի /սեփականության վկայական թիվ 02122021-01-0217/ պայմանագրի կնքման հարցի քննարկում:
3) «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերության հետ ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/4 /ինսունինը կոտորակ չորս/ հասցեում գտնվող անշարժ գույքի /սեփականության վկայական թիվ 02122021-01-0136/ վարձակալության պայմանագրի կնքման հարցի քննարկում:
4) «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերության հետ ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99 /ինսունինը/ հասցեում գտնվող անշարժ գույքի /սեփականության վկայական թիվ 02122021-01-0207/ վարձակալության պայմանագրի կնքման հարցի քննարկում:

Զեկուցող՝ Խաչատուր Անտոնյան

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ՝

Օրակագում ընդգրկված հարցերը՝ ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/5 /ինսունինը կոտորակ հինգ/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 03122021-01-0130/, ՀՀ, Երեւան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/1 /ինսունինը կոտորակ մեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 02122021-01-0217/, ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/4 /ինսունինը կոտորակ չորս/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 02122021-01-0136/ և ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99 /ինսունինը/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 02122021-01-0207/ վարձակալության իրավունքով հանձնելու վերաբերյալ: Քննարկվող հարցի վերաբերյալ Զեկուցողը հայտնեց, որ առաջացել է նշված հասցեներում գտնվող անշարժ գույքերը «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելու անհրաժեշտություն:

Հարցը դրվեց քվեարկության՝
Միխաիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ ԿՈՂՄ
Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ ԿՈՂՄ
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ ԿՈՂՄ
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0

ՈՐՈՇՎԵՑ՝

1) Վարձակալության իրավունքով «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերությանը տրամադրել ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/5 /ինն սունինը կոտորակ հինգ/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 03122021-01-0130/, ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/1 /ինն սունինը կոտորակ մեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 02122021-01-0217/, ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99/4 /ինն սունինը կոտորակ չորս/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 02122021-01-0136/ և ՀՀ, Երևան, Շենգավիթ Մասիսի փողոց 99 /ինն սունինը/ հասցեում գտնվող անշարժ գույքը /սեփականության վկայական թիվ 02122021-01-0207/:

2) Հանձնարարել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության տնօրեն Խաչատուր Անտոնյանին անձամբ կամ լիազորված անձի միջոցով «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերության հետ կնքել ՀՀ, ք. Երևան, Մասիսի 99, Մասիսի 99/4, Մասիսի 99/5, Մասիսի 99/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի վարձակալության պայմանագրեր՝ ցանկացած պայմաններով:

Միխաիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ

Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ

Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ